


ԽՕՍԲԻՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ

Ճշ Տաբարոսբեռնի Եկոսյաչի Վկաւեթիկ Տաւիւ

ՄԱՍՆ Ա.



Թարգմանեց ու խմբագրեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ՄԻՆՉԵՒ ՕՐԱ ԱՌԱՔՈՒԵԼ ԵՆ

1. Ամենայն Սրբոց	Հոկտեմբեր	2003
2. Եթէ մի ընկեր ունես	Նոյեմբեր	2003
3. Անմահ Հայրեր	Դեկտեմբեր	2003
4. Փարիսեցին ու Մաքսաւորը	Յունուար	2004
5. Խօսքին Հաւատարիմ, Մասն Ա.	Փետրուար	2004



Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումները եւ առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

mashtoz@armenia.com

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր գրութիւններ պարունակող այս նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու եւ հարցումներ ներկայացնելու, ինչպէս նաեւ զանազան պատճառներով չստացածդ նախորդ գրութիւններից մէկը պատուիրելու համար, կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ Ի Քրիստոս Յիսուս՝

Մաշտոց Վահէ Ղապարեան

ԽՕՄԲԻՆ ՀԱՒԵՏԱՐԻՄ

Ճշմարտությունը Երեսմանը Վերադարձնելու Ծառայություն

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Կարող է գոյություն ունենալ մի կեղծ կրօն: Ասել եւ ապացուցել, որ կրօններից մէկը կեղծ է, ոչ մէկի համար կրօնական հալածանք չէ: Կրօնական հալածանք չէ այն իրողութիւնը, որ ուսեալ մի անձ հրապարակայնօրէն դիմակազերծում է այդ կրօնը, փաստելով՝ որ կեղծ է, այսպիսով ստեղծելով տեսնելու հնարաւորութիւնը՝ թէ ինչ տարբերութիւններ կան կեղծ կրօնի եւ ճշմարիտ կրօնի միջեւ: Բայց դիմակազերծելու եւ ապացուցելու համար, որ սխալ կրօնները կեղծիք են, ճշմարիտ երկրպագուն պէտք է գործի դնի «Գրքի Վերականգնման Կոմիտեի» միջոցներ, Գրքի Վերականգնման Կոմիտեի, որոնք չեն կարող կեղծ լինել: Կեղծ կրօնը հրապարակայնօրէն դիմակազերծելը անշուշտ շատ աւելի կարեւոր է, քան փաստելը՝ թէ լրագրի մէջ յայտնուած լուրերը սուտ են: Սա մի ծառայութիւն է հասարակական օգտակարութեան, երբեք չի կարող կոչուել կրօնական հալածանք եւ վերաբերում է անձանց յաւիտենական կեանքին ու երջանկութեանը»:

Այսպէս է արտայայտուած Եհովայի Վկաների Ղեկավար Մարմինը իր «Դիտարան» պաշտօնաթերթի 368րդ էջում (15.06.1964): Շատ լաւ միակ կէտն է, որի հետ համաձայնուած ենք: Ցաւօք սրտի:

Որպէս գնահատման ապահով կանոն, Եհովայի Վկաների (այսուհետեւ՝ Եհովալի) վերաբերեալ մենք գործածելու ենք մեծ մասամբ իրենց իսկ հրատարակութիւնները: Դրանցում է ամփոփուած իրենց պաշտօնական ուսմունքը, ուստի դրանք են «Գրքի Վերականգնման Կոմիտեի» եւ «Գրքի Վերականգնման Կոմիտեի, որոնք չեն կարող կեղծ լինել» այս աղանդի ճանաչման գործում: Դրանց գործածումը խաղաղ սրտով եւ պատիւով, թոյլատրուած է բացայայտել, որ Եհովալիութիւնը կրօն - թեկուզեւ կեղծ կրօն - լինելուց չափազանց հեռու, պարզապէս առեւտրական մի իրականութիւն է, կրօնի դիմակով ծպտուած:

Բրուքլինի Ղեկավար Մարմինը գիտէ, որ ասում ենք ճշմարտութիւնը: Կ'ուզէինք նաեւ, որ համոզուէին՝ թէ պատերազմ չենք մղում իրենց շահերի դէմ, առաւել եւս նուազ՝ իրենց անձերի դէմ: Իրենց եւ բոլոր Եհովայի Վկաներին յղում ենք այս պատգամը. «Ճշմարտությունը չեղ կ'ապրի» (Յվհ 8, 32):

Բայց Եհովայի Վկաների շարքերում կան նաեւ ազնիւ ու անկեղծ հոգիներ, որոնք պարզապէս խաբուած լինելով, կարծում են՝ թէ իսկապէս ծառայում են Աստծուն, երբ կատարում են Բրուքլինի Ղեկավար Մարմնի կողմից ստացուած հրամանները: Այսպիսիք սովորաբար կրօնական աղքատ կրթութիւն ունեցող անձեր են, որոնց որսալը բաւական հեշտ է եղել Եհովալիների համար: Այս անձերի հոգիներում յարգում եմ իրենց անկեղծութիւնը, որով կամենում են ծառայել Աստծուն եւ հասնել յաւիտենական կեանքին: Այս հոգիները իմ եղբայրներն ու քոյրերն են, որոնց սիրում եմ եւ որոնց համար կը տայի ամբողջ ժամանակս եւ ուժերս, նրանց խաղաղ, հոգեպէս երջանիկ եւ ճշմարտութեան մէջ տեսնելու համար: Ահա նրանց համար է՝ որ աշխատել եմ, նրանց համար է՝ որ աղօթում եմ:

Բայց անշուշտ, գրութեանս որպէս առաջին հասցատէրեր ճանաչում եմ Հայ Եկեղեցու հաւատարիմ զաւակներին, որոնք ներկայ դժուարութիւնների մէջ, հայրենիքի տնտեսական

աղքատութեան պայմաններում, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու ներքին ու արտաքին նեղութիւնների ներքոյ կքուած, շարունակում են հետեւել իրենց միակ Ուսուցչին՝ Յիսուս Քրիստոսին, եւ օտարներին չեն վաճառում ո՛չ իրենց հոգիները, ո՛չ իրենց անձերը, ո՛չ իրենց հայրենիքն ու ժողովուրդը, ո՛չ էլ իրենց Մայր Եկեղեցին: Հայ Եկեղեցու այս հաւատարիմ գաւակներին քաջալերում եմ իրենց ընթացքի մէջ, բայց տեղին եմ համարում տալ նաեւ մի քանի խորհուրդներ: Նախեւառաջ, գանազանել սխալը սխալուողից: Եթէ ամբողջական ատելութիւն պէտք է ունենանք կեղծիքի նկատմամբ, որ գործն է սատանայի, այնուամենայնիւ պէտք է կատարեալ յարգանք ու սէր ցուցաբերենք այն անձանց նկատմամբ, որոնք տակաւին խաւարի մէջ են: Մարդկային որեւէ էակ, առանց բացառութեան, լինի քրիստոնեայ՝ թէ հրեայ, բողոքական՝ թէ եհովաջի, իսլամ՝ թէ բուդդիստ, թերահաւատ՝ թէ անաստուած, ծարաւն ունի սիրոյ, ըմբռնումի, իրաւունքն ունի յարգուելու որպէս մարդկային անձ: Ընդ մեր՝ իրական քրիստոնեաներիս պարտականութիւնն է վկայել աշխարհի դիմաց, որ Աստուած Սէր է: Ինչպէս որ մենք Աստուծոց ստանում ենք մեր մեղքերի ներումը, այնպէս էլ մենք պէտք է ներենք մեր մերձակորներին: Ուրեմն, պայքարենք սխալի դէմ, բայց երբեք չստորացնենք սխալուողին: Երկրորդ, խօսելիս ժպիտը չպակասի մեր շուրթերից: Տարածենք Քրիստոսի Յարութեան գուարթութիւնը, երբեք չտրուենք զայրոյթին: Դիմացինը պէտք է զգայ, որ աշխատում ենք իրեն ցոյց տալ ճշմարտութիւնը իր իսկ բարիքի, իր իսկ փրկութեան, եւ ոչ թէ մենք մեզ եւ մեր գաղափարները պարտադրելու համար: Երրորդ, որ վերջինն է ու ամենակարեւորը, յիշենք՝ որ ոչ թէ մեր խօսքերը, այլ մեր կեանքն է, որ պէտք է քարոզի ճշմարտութիւնը: Մեր վարքը պէտք է ցոլացնի Քրիստոսի Դէմքի փառքը: Ապրենք խոնարհութեամբ, յարգելով իւրաքանչիւր մարդու, սիրելով բոլորին, օգնութեան հասնելով կարիքաւորներին, որովհետեւ մեր հայրենակիցների մեծամասնութիւնը անդամակցում է աղանդներին՝ պարզապէս որովհետեւ ստանում է նրկական օգնութիւններ իր ընտանիքի համար:

Սոյն աշխատութեան տիտղոսը («Խօսքին Հաւատարիմ») ներշնչուած է Նոր Կտակարանից. մենք Խօսքի ծառաներն ենք (Ղկս 1, 2), կրթուած ենք Խօսքով (Գղտ 6, 6), յարատեւում ենք Խօսքի մէջ (Յվհ 8, 31; 15, 20; 17, 6; 1Յվհ 2, 5): Տնտեսը, ծառան նախեւառաջ պէտք է հաւատարիմ լինի (Մտթ 24, 45; 1Կր 4, 2; Կղս 1, 7; 2Տմ 2, 2): Գրուած Խօսքը հաւատարիմ է, այսինքն՝ ճշմարտախօս (Յյտ 21, 5; 22, 6) եւ հաւատարմութիւնը, կամ՝ հաւատքը, պտուղներից մէկն է այն Հոգու (Գղտ 5, 22), որին եհովաջիները չեն ճանաչում: Եհովաջիները «նենգում են Խօսքը» (2Կր 4, 2), ինչպէս կը տեսնենք յետագայ էջերում:

Ընթերցողի ներողամտութիւնն եմ հայցում, եթէ որոշ տեղեր ստիպուած եմ լինելու դիմելու կրկնութիւնների. նպատակս նիւթի առաւել խորացումն է, ինչպէս նաեւ՝ քննարկուող նիւթերն ուրիշ նիւթերի հետ համեմատելու անհրաժեշտութիւնը: Երբեմն նաեւ շեղում եմ բուն նիւթից, քննարկուող որոշ հարցերի շուրջ մեկնաբանութիւններ տալու եւ եհովաջիական դիրքորոշումները հերքելու համար: Գրութիւնը շատ չձանրացնելու նպատակով, կանգ չառայ եհովաջիական մի քանի ուսուցումների վրայ, որոնք հիմնականում բարոյական բնոյթի են (ինչպէս արեան փոխներարկման հարցը) եւ հետեւաբար՝ իւրաքանչիւր ոք կարող է ինքն իրեն դատել եւ հերքել եհովաջիական այդ ուսուցումները: Չանդրադարձայ նաեւ մի քանի հարցերի, որոնք եհովաջիները «որդեգրել են» բողոքական գալստական (աղուենտիստ) այն միջավայրից, որում ծնուել են. գտնում եմ, որ այդ նիւթերը կարող են առարկան հանդիսանալ նմանատիպ մէկ ուրիշ հատորի համար: Ինչպէս նաեւ պէտք է նշեմ, որ եհովաջիական հրատարակութիւններից բոլոր մէջբերումները կատարել եմ դրանց իտալերէն թարգմանութիւնից, չունենալով դրանց ո՛չ անգլերէն բնագիրը, ո՛չ էլ հայերէնը: Հիմնականում, գործածածս հատորները հետեւեալներն են.

ANTONIO CONTRI, *Fedeli alla Parola*, Torino 1991.

BERNARD BLANDRE, *La storia dei Testimoni di Geova*, Torino 1989.

GIUSEPPE CROCKETTI, *I Testimoni di Geova a confronto con la vera Bibbia*, Milano 1993.

GIUSEPPE CROCETTI, *I Testimoni di Geova*, Bologna, 1979.

LORENZO MINUTI, *I Testimoni di Geova non hanno la Bibbia*, Roma 1992.

PAOLO SCANOCCHINI, *La Bibbia dei Testimoni di Geova; traduzione o manipolazione?*, Torino 1992.

Կրկին անգամ մաղթում եմ, որ այս էջերի ընթերցանութիւնը օգնի Եհովայի Վկաներին անդամակցած Հայորդիներին՝ բացայայտելու աստուածային ճշմարտութիւնը եւ ապրելու այդ ճշմարտութեան համաձայն:

Թող ամէնուր ճանաչուի, երկրպագուի ու փառաբանուի Ամենասուրբ Երրորդութիւնը եւ Մէկ Աստուածութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՊԼՏՐԵԿԱՆ ՀԱՄԼԵՒՕՏ ԼԿՆԵՐԿ

Հասարակական այն երեւոյթը, որ ի յայտ եկաւ տասնութերորդ դարի վերջում եւ տասնիններորդ դարի սկզբում, եւ որ յայտնի է «արդիւնաբերական յեղաշրջում» անուամբ, ծնունդ տուեց կրօնական բազմաթիւ խմբակների, որոնք նախորդ դարում վխտում էին Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Այդ իրադարձութիւնների հետեւանքում, գիւղատնտեսական քաղաքակրթութիւնը անհետանում էր, իր տեղը զիջելով արդիւնաբերական յեղափոխութեանը: Հասարակական ու քաղաքական կարգերի արմատական փոփոխութիւնները շատերին մղեցին կարծելու՝ թէ հասել էին վերջին ժամանակները: Շատերն հին աշխարհի վերջում տեսնում էին «աշխարհի վախճանը»: Ոմանք կամեցան Աստուածաշնչում գտնել իրենց վախերի ապացուցումը եւ սկսեցին Աստուածաշնչում փնտռել «աշխարհի վերջի» ճշգրիտ թուականը:

Իրանց շարքերում ամենանշանաւորը եղաւ Վիլիամ Միլլերը (1782-1849), որն Աստուածաշունչը ձեռքին «ապացուցում էր»՝ թէ աշխարհի վախճանը եւ Քրիստոսի վերադարձը տեղի էին ունենալու 1843 թուականին: Հազարաւոր մարդիկ հավաքւում էին ունկնդրելու Միլլերի «մարգարէութիւնները»: Անցաւ 1843 թուականը, Միլլերը ուղղեց իր հաշուարկները եւ աշխարհի վախճանը որոշեց 1844 թուականի գարնանը: Այդ գարունը նոյնպէս անցաւ. Միլլերը, յուսախաբ եւ ծաղրի առարկայ դարձած, իր աշակերտների խորհուրդին հետեւելով, որոշեց մէկ այլ թուական. 22 Հոկտեմբեր 1844: Վերջին յոյսն էր: Եթէ Քրիստոս չվերադառնար, գալստականների (ադուենտիստների) ապագան վտանգի ու հարցականի տակ էր յայտնուելու: Միլլերի հետեւորդները կրկին պատրաստուում էին Քրիստոսի հետ հանդիպմանը, որը սակայն չներկայացաւ տրուած ժամադրութեանը: Ծաղրուծանակի ենթարկուելով, Միլլերի գալստականները բաժանուեցին զանազան խմբակների:

Ջիրականացած սպասումների այս մթնոլորտում էր, որ երեւան եկաւ Չարլզ Ռասըլը, եհովաջիների ադանդի հիմնադիրը:

Ծնուել է 1852 թուականի Փետրուարի 15ին, Բրուքլինի մօտակայքում: Հայրը հիւսուածքեղէնի վաճառական էր: Ինը տարեկանում կորցնում է մօրը, որից ստացել էր բողոքական կրթութիւն: Ստանում է կալուինական դաստիարակութիւն, որը բացասական ազդեցութիւն է ունենում նրա արդէն իսկ յոռետես բնաւորութեան վրայ: Նրան չափազանց վախեցնում էր նախասահմանման ուսմունքը եւ իրեն արդէն իսկ դատապարտուած էր տեսնում դժոխքի: Տասնհինգ տարեկան հասակում, Ռասըլը ընկնում է կրօնական խոր ճգնաժամի մէջ: Սկսում է քննել կրօնական զանազան հաւատքները, նաեւ արեւելեանները, բայց մնում է դժգոհ:

1870 թուականի մի երեկոյեան, անցնելով մի տան մօտով, լսում է երգեր ու աղօթքներ: Ներս է մտնում. Ջոնաս Վենդելը, ադուենտիստ, քարոզում է՝ թէ անհնարին է դժոխքի գոյութիւնը: Ռասըլը իրեն սփոփուած է զգում, վերագտնում է Աստուածաշնչի հանդէպ հաւատքը եւ ընկղմւում է նրա ուսումնասիրման մէջ: Բայց, ցավօք, այդ ուսումնասիրութիւնները կատարում է՝ գտնելու համար այն՝ ինչ փնտռում է, ինչ յարմար է իրեն, ինչը որ որոշ չափով կարող էր սփոփել իր խռովուած ու խախտուած հոգեկան վիճակը: Ուսումնասիրում էր Աստուածաշունչը ո՛չ թէ Աստծոյ ձայնը լսելու, դարձի գալու, վարքը բարեփոխելու եւ Աստծոյ կամքին համապատասխանելու նպատակով, այլ պարզապէս գտնելու համար այնտեղ արդարացումներ այն արարքների կամ մտածումների ու զգացումների համար, որ ծանրանում էին տակավին պատանի Ռասըլի խղճի վրայ եւ նրանում ստեղծում էին դժոխքի դատապարտուած լինելու համոզումը: Ուրեմն, բողոքական միջավայրում եւ հոգեկան անհաւասարակչիւ մթնոլորտում է առաջանում եհովաջիական շարժումը:

Նոյն տարուայ ընթացքում հիմնում է երիտասարդական մի խմբակ, որն անուանում է «Աստուածաշնչեան ուսանողներ»: Իրականում, այս կազմակերպութիւնը «Եհովայի

Վկաներ» անունը ստանում է Ռասըլի մահից շատ տարիներ յետոյ, նրան յաջորդած Ռաթրըֆորդի օրոք, ինչպէս կը տեսնենք, երբ շարունակ չկատարուող մարգարէութիւններից յոգնած եւ կազմակերպութիւնը լքող անձերի թիւն այնքան շատ էր, որ ըստ շուկայական օրէնքների՝ սնանկացած կազմակերպութիւնը փրկելու միակ միջոցը անունը փոխելն էր եւ նոր շապիկով առեւտրի ներկայանալը:

Այս նոյն տարիներին, Ռասըլը հանդիպում է մի անձի, որի գաղափարները դնում է իր «աստուածաբանութեան» հիմքում. նելսըն Բառըրը: Սա ձախողուած Վիլիամ Միլլերի համագործակիցներից էր: 1844 թուականի մեծ յուսախաբուութիւնից յետոյ, Բառըրը մշակել էր մի նոր ծրագիր, որի համաձայն՝ Քրիստոս գալու էր 1874 թուականին: Այդ տարին նոյնպէս անցաւ առանց ոչինչ պատահելու եւ Բառըրը մնաց դատարկ ձեռքերով. «Անհնարին է, – ասում էր, – հաշուարկները ճշգրիտ են»:

Բառըրը գրեթէ համոզուել էր, որ գործել էր իր ուսուցչի՝ Միլլերի միեւնոյն սխալը, երբ իր գործակիցներից մէկը, Բ. Վ. Քէյթ, ցոյց տուեց նրան Նոր Կտակարանի անգլերէն հրատարակութիւններից մէկը, որում «parusia» բառը, որով Սուրբ Գիրքը մատնանշում է Քրիստոսի վերադարձը, թարգմանուած էր ոչ թէ «գալուստ», այլ՝ «ներկայութիւն»: Բառըրը դրանում տեսաւ մի հնարաւորութիւն՝ փրկելու 1874 թուականը: Ինքն իրեն եւ իրեն հետեւող պարզամիտներին համոզեց՝ թէ թուականը ճիշտ էր, սխալ էր միայն այն՝ ինչին որ սպասում էին: 1874ին Քրիստոս վերադարձել էր, բայց որպէս «անտեսանելի ներկայութիւն», ոչ թէ «տեսանելի գալուստ»: Այո՛, այս բոլոր աղանդների գաղափարները մշակուում են այսպիսի քմահաճոյական կերպով, Աստուածաշունչը վերածելով աստղագուշակութեան հատորի, ինչը որ բացայայտ ցոյց է տալիս՝ որ այդ անձերը նուազագոյն յարգանք անգամ չունէին հաւատքի եւ Աստուծոյ Խօսքի նկատմամբ, այլ այսպէս ասած՝ ստեղծում էին իրենց կուսակցութիւնները, ապրելու միջոցներ եւ ամբոխի մէջ անուն շահելու համար:

«Աշխարհի վախճանի» թուականը յօրինեցին՝ մշակելով Դանիէլ 4, 13 հատուածի «եօթ ժամանակների» ուսմունքը: Բառըրու համաձայն, «եօթ ժամանակները» համապատասխանում էին եօթը տարիների, իւրաքանչիւրը 360 օրով, հետեւաբար՝ 2.520 օրերի: Յենուելով, ապա, ուրիշ տեքստերի վրայ (որոնք կը քննարկենք իրենց ժամանակին), հաստատեց՝ թէ իւրաքանչիւր օր համազօր է մէկ տարուայ: Ուստի, 2.520 օրերը հաւասար սեպեց 2.520 տարիների: Քանի որ 2.520 տարիների շրջանը հաշուում էր՝ մեկնելով Ք.ա. 607 թուականից (կարծելով՝ թէ այդ թուականին Նաբուգոդոնոսորը աւերեց Երուսաղէմը, ինչը որ, ինչպէս կը տեսնենք, սխալ է), հանդիպեց Ք.յ. 1914 թուականին: Այսպիսով, «աշխարհի վախճանը» որոշեց 1914 թուականին:

1876 թուականին, Ռասըլը Լոս Անջելեսում հանդիպեց Բառըրին, որը նրան բացատրեց իր «ժամանակագրութիւն»ը եւ «անտեսանելի ներկայութեան» ուսմունքը: Ռասըլը ընդունեց Բառըրու ուսմունքը: Յիսուս տարի շարունակ եհովաջիների «Դիտարանի Ընկերութիւնը» իր հետեւորդներին քարոզեց՝ թէ Քրիստոսի «անտեսանելի ներկայութիւնը» սկսուել էր 1874 թուականին, իսկ «աշխարհի վախճանը» տեղի էր ունենալու 1914ին: Հետագայում, ինչպէս կը տեսնենք, եհովաջիները բազում անգամներ փոփոխեցին այս թուականները, ամէն անգամ մատնուելով խայտառակումի: Բայց արդ լսենք Ռասըլի խօսքերը.

«1914 թուականին վերանալու է այն՝ ինչը որ Աստուած անուանում է Բաբելոն, իսկ մարդիկ անուանում են քրիստոնէութիւն, ինչպէս որ ցոյց են տալիս մարգարէութիւնները»:

«Արքայութեան սկզբին, այսինքն՝ 1914 թուականի վերջաւորութեանը, իշխանութեան գլուխ են անցնելու Հին Կտակարանի յարութիւն առած սրբերը, սբ. Յովհաննէս Մկրտչից սկսած մինչեւ Աբէլը»:

Ինչպիսի «հանճարեղ» միտք. գնահատեցէք ինքներդ:

Տարածելու համար իր մտքերը, Ռասըլը 1879 թուականին սկսեց «Watch Tower» (Դիտարան) թերթի հրատարակումը:

Այս օրերին են տեղի ունենում Ռասըլ ամուսինների ընտանեկան վեճերը, որոնց հետեւանքում նրանք ամուսնալուծում են: Կինը, Մարիա Ռասըլը, ամուսնուն մեղադրում էր ամուսնական անհավատարմութեան մէջ: Տեսել էր Չարլզին «Դիտարան» ընկերութեան աշխատակցուհիներից մէկի սենեակում եւ լսել էր հետեւեալ խօսքերը. «Ես նման եմ մեղուզայի: Լողում եմ այստեղ ու այնտեղ: Հպում եմ սրան ու նրան: Եթէ մէկը պատասխանում է՝ նրան վերցնում եմ. ապա թէ ոչ՝ լողալով ուղղում եմ դէպի ուրիշները»: Այստեղ զանց ենք առնում անդրադառնալու այն դատարարութիւններին, որ տեղի ունեցան՝ ամուսնալուծութեան եւ ժառանգութեան բաժանման համար: Երկարատեւ կռիւներից յետոյ, եհովաջիութեան հիմնադիրը կարողացաւ կիսել իր ունեցուածքները իր (նախկին) կնոջ հետ: Եհովաջիութեան մնացած պատմութիւնը նոյնպէս, մինչեւ մեր օրերը, չգաղարեց դժբախտութիւն տարածել ընտանիքներից ներս: Եհովաջիութեան գլխաւոր թշնամին ընտանեկան օջախն է, որը նրանք կործանում են, ընտանեկան սիրոյ բոլոր կապերը որակաւորելով որպէս սատանայական (օրինակ՝ ընտանիքի անդամներից մէկի ծննդեան օրուայ հանդէսն ու քաղցրեղէնները, ընտանիքի անդամներից որեւէ մէկին արիւն փոխներարկելը, նոյնիսկ եթէ հիւանդը մահուան վտանգի մէջ է): Այդ օրերի թերթերը բաւական խօսեցին «վերապատուելի Ռասըլ Մեղուզայի» մասին: Այս խայտառակիչ իրադարձութիւնները Ռասըլին ստիպեցին իր Ընկերութեան կենտրոնական աթոռը Պիտսբուրգից տեղափոխել Բրուքլին:

Ռասըլը մեռաւ 1916 թուականի Հոկտեմբերի 31ին, այդպէս էլ չտեսնելով «աշխարհի վախճանը»:

Ռասըլի մահը իր հետեւորդներից շատերին թողեց խաբուած եւ յուսահատ, ինչը որ բնական էր: Այսպիսի մթնոլորտում, 1917 թուականի Յունուարի 6ին, ներքին ահաւոր վեճերից, դատարարութիւններից եւ ուղղակի բռնութիւններից յետոյ, «Դիտարանի Ընկերութեան» նախագահ ընտրուեց Զոգէֆ Ռաթըրֆորդը:

Ծնուել է 1869 թուականին Միսսուրիում, հողագործի ընտանիքում: Հետեւում էր իրաւաբանական ուսումների, բայց հայրը նրան ոչնչով չէր օգնում, որովհետեւ կամենում էր նրան ունենալ իր մօտ, ազարակում: Երիտասարդը նաեւ աշխատում էր, ուսման վարձը վճարել կարողանալու համար:

1931 թուականը պատմական կարեւորութիւն ունեցաւ այս աղանդի համար: Ռաթըրֆորդը փոխեց նրա անունը: Այդուհետեւ չպէտք է կոչուէին «աստուածաշնչեան ուսանողներ» կամ «ռասըլականներ», այլ՝ «Եհովայի Վկաներ»: Այս տեսանկիւնից դիտուած, Ռաթըրֆորդը կարող է համարուել Եհովայի Վկաների հիմնադիրը, որովհետեւ իր ընտրութեան հետեւանքում՝ աղանդին յարողների մէկ մասը բաժանուեց եւ մինչեւ օրս էլ սերտում է Ռասըլի գրութիւնները, թշնամական կեցուածք ունենալով Եհովայի Վկաների հանդէպ:

Բայց ակամայ մտածում եմ. «Վկաներն են ո՞ւմ, ի՞նչ բանի»: Վկան նա է՝ ով ինչ որ մի փաստի «—ղլա՛կ» ծանօթութիւնն ունենալով, փոխանցում է ուրիշներին: Յովհաննէս Առաքեալը գրում է. «Այն՝ ինչը որ տեսանք ու լսեցինք, նոյնը աւետում ենք ձեզ» (1Թվհ 1, 3): Մենք՝ քրիստոնեաներս երբեք չենք վկայում, այլ աւետում ենք Քրիստոսի Յարութիւնը, հիմնուելով Առաքեալների վկայութեան վրայ, որովհետեւ նրանք էին ականատեսները: Ո՞ւմ են վկայում եհովաջիները, ի՞նչ են վկայում եհովաջիները: Թերեւս միայն մէկ բան. որ ճշմարիտ են Պօղոս Առաքեալի խօսքերը. «Եթէ որեւէ մէկը ձեզ քարոզում է մեզնից լսած Աւետարանից տարբեր մի բան, թող լինի անաթեմայ (= նզովուած, անիծեալ)» (Գղտ 1, 9): Այո՛, վկայում են՝ որ ծնուել են երէկ (1879ին) եւ սատանայական մոլեգնութեամբ, միմիայն դրամի համար, մարտնչում են Քրիստոսի 2000ամեայ եկեղեցու դէմ:

Ռասըլի յաջորդը նոյնպէս «հանճարեղ» միտք ունէր: Որպէսզի քաջալերէր իր յուսահատ եհովաջիներին, 1914ի չիրականացած «աշխարհի վերջը» փոխադրեց 1918ին: Բայց ամբողջովին չմերժեց իր նախորդի «մարգարէութիւնը»: Ըստ իր, 1914ին իսկապէս

Հաստատուել էր Աստծոյ Արքայութիւնը, բայց ոչ թէ երկրի վրայ, այլ «անտեսանելի երկինքներում»: Պատճառաբանում էր այսպէս. հոռոմէացիների կողմից Երուսաղէմն ավերուեց Ք.յ. 70 թուականին, բայց հրեական ապստամբութիւնը ավարտուեց միայն երեք ու կէս տարի յետոյ. 73ին: Ուրեմն, հարկաւոր է այդ տարիները նոյնպէս ակելացնել 1914ի աշնանը, ինչը որ անելով՝ Հասաւ 1918ի գարնանը: Բայց այդ թուականին դադարեց պատերազմը եւ Ռաթրֆորդը բանտարկուեց, պատերազմի տարիներում պետութեան ղէմ քարոզած լինելու համար: Ուրիշ ոչինչ:

Բանտից դուրս գալով, Ռաթրֆորդը այս անգամ որոշեց 1925 թուականը: 1920 թուականին հրատարակեց աղմուկ հանող վերնագրով մի գրքոյկ. «Միլիոնաւոր մարդիկ, որ այսօր ապրում են, չեն մահանալու»: Նպատակն էր ցնցում (սենսացիա) առաջացնել եւ գովազդ կատարել (միշտ հետեւելով շուկայական գործելակերպին): Յոյց տալու համար իր վստահութիւնը, Ռաթրֆորդը Կալիֆորնիայում, Սան Դիեգոյում, կառուցել տուեց մի հոյակապ պալատ, որպէսզի այնտեղ հիւրընկալէր յարուսթիւն առած Աբրահամին եւ միւս Նահապետներին: Անցաւ նաեւ 1925 թուականը, Նահապետները յարուսթիւն չառան, բայց պալատը դատարկ չմնաց. 1930ին այնտեղ բնակուեց ինքը Ռաթրֆորդը, որովհետեւ ... Կալիֆորնիայի մեղմ կլիման նպաստում էր իր առողջութեանը: (Գնահատականները թողնում եմ քեզ, սիրելի ընթերցող):

Եհովաճիներին անկեղծ հաւատքով յարած անձանց յուսահատութիւնն ու զայրոյթը վիթխարի էին: Տասնեակ հազարաւոր մարդիկ վերջնականօրէն լքեցին աղանդը եւ վերադարձան Քրիստոնեայ Կաթոլիկէ եւ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու գիրկը, որը 2000 տարիներ շարունակ խնամել ու յաւիտենական կեանքին է հասցրել իր զաւակներին, եւ նոյնը շարունակելու է կատարել մինչեւ վերջ: Այս վերադարձողները եղան խելացի, որովհետեւ եհովաճիների հետագայ պատմութիւնը նոյնպէս եղաւ մի պատմութիւն ստախօսութիւնների ու չիրականացած սպասումների, մինչեւ մեր օրերը, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ:

Ռաթրֆորդը մեռաւ 1942 թուականի Յունուարի 8ին, ինքը նոյնպէս չտեսնելով «աշխարհի վախճանը»:

Ռաթրֆորդին յաջորդեց Նաթան Քնորը, 1942 թուականի Նոյեմբերի 13ին: Ծնուել էր 1905 թուականին եւ անդամակցել էր եհովաճիութեանը 1921ին:

Եհովաճիների համար սովորական բան է «հանճարեղ» միտք ունենալը եւ տրուելը թուաբանական հաշուարկներին: «Մանրագննին» ուսումնասիրելով ղէպքերի նշանները, Նաթանը որոշեց՝ որ աշխարհն իր վախճանին հասնելու էր 1975 թուականի աշնանը: Ահա իր իսկ խօսքերը.

«Մարդու արարումով սկսուած վեց հազար տարիները վերջանալու են 1975 թուականին, իսկ մարդկային պատմութեան հազարամեայ եօթներորդ շրջանը սկսուելու է 1975 թուականի աշնանը»:

«Ճիշտ է, անցեալ ժամանակներում եղել են ոմանք, որ կանխագուշակել են աշխարհի վախճանը, տալով նոյնիսկ յստակ թուականներ: Վախճանը չի եկել: Այդ մարդիկ կատարել են կեղծ մարգարէութիւններ: Ինչո՞ւ: Ի՞նչ էր նրանց պակասում: Նրանց պակասում էր Աստծոյ ճշմարտութիւնը ... : Բայց ի՞նչ ասենք այսօր: Այսօր ունենք պահանջուած յստակութիւնը, ամբողջը: Եւ ջախջախիչ է»:

Այդ ոմանք, որոնց Նաթանը անուանում է կեղծ մարգարէներ, իր նախորդներն էին. Ռասըլը եւ Ռաթրֆորդը: Ինքը, մինչդեռ, ճշմարիտ մարգարէն էր, որ ունէր «Աստծոյ ճշմարտութիւնը» եւ «ջախջախիչ յստակութեամբ» գիտէր՝ թէ 1975 թուականի աշնանը տեսնելու էր «աշխարհի վախճանը»: Կար միայն մէկ կասկած. «Արմազեղոնի ճակատամարտի» ավարտի եւ հազարամեայ Արքայութեան սկզբի ճշգրիտ օրը: Բայց «խօսքը

վերաբերում է շաբաթների կամ ամիսների, ո՛չ տարիների» (Դիտարան, 01.02.1969, էջ 83):

Ոմանք, սակայն, խորհրդածույց էին եւ, ինչը որ շատ զարմանալի է Եհովայի Վկաների մէջ, մտածում էին իրենց խելքով: Այդպիսիներից մէկն էր Ռայմոնդ Ֆրանցը, Եհովալիների Ղեկավար Մարմնի յաջորդ Նախագահի գարմիկը, որի գրքից մէջբերում ենք իր իսկ խօսքերը (այդ գիրքը գրել է Եհովալիութիւնը Լքելուց անմիջապէս յետոյ)․

«Որքան աւելի էի կարդում Աստուածաշունչը, այնքան աւելի էր անտեղի թւում այդ ամբողջ ուսմունքը, որը ոչնչով չէր համապատասխանում Յիսուս Քրիստոսի սովորեցրածների հետ. ”Ինչ վերաբերում է այդ օրուան եւ այդ ժամին, ոչ ոք չգիտէ, ո՛չ հրեշտակները, ո՛չ Որդին, այլ միայն Հայրը” (Մտթ 24, 36)»:

Բայց 01.02.1969 թուականի «Դիտարան»ը գրեց՝ թէ չափազանց լրջութեամբ չպէտք է հասկացուէին Յիսուսի խօսքերը․

«Սա ժամանակը չէ Յիսուսի խօսքերի հետ խաղալու: Ընդհակառակն, ժամանակն է եռանդազին համոզուելու՝ թէ մարդկային իրականութեան այս համակարգը ճեպընթաց հասնում է իր ահաւոր վախճանին: Մի՛ թոյլատրէք՝ որ խաբեն ձեզ․ բաւական է՝ որ Հայրն իմանայ այդ օրն ու ժամը»:

Մեկնաբանում է Ռայմոնդ Ֆրանցը․

«Սա հաւասար է ասելու. Յիսուս ասաց այս ու այս բաները, բայց դուք շատ կարեւորութիւն մի՛ տուէք: Յիսուս Քրիստոսի ասածները չէ՛ որ պէտք է առաջնորդեն ձեր կեանքը, այլ այն՝ ինչ ասում է Ղեկավար Մարմինը» (R. FRANZ, Crisi di coscienza. Un Testimone di Geova si confessa, ed. Dehoniane, Napoli 1988, pp. 284-286) (գրքի վերնագիրը հայերէն նշանակում է՝ Խղճի ճգնաժամ: Եհովայի մի Վկայ խոստովանում է):

Անցաւ նաեւ 1975 թուականը: Եւ ի՞նչ պատահեց: Ինքնուրոյն մտածող խելացի մարդիկ, որ մինչեւ այդ օրը յարում էին Եհովալիութեանը, հարիւր հազարներով Լքեցին աղանդը: Ահա մի քանի թուեր․

1973	Թուական	77.806	մարդ
1974	Թուական	17.232	մարդ
1975	Թուական	117.040	մարդ
1976	Թուական	105.693	մարդ
1977	Թուական	126.809	մարդ
1978	Թուական	113.845	մարդ
1979	Թուական	87.948	մարդ
1980	Թուական	5.683	մարդ
1981	Թուական	7.498	մարդ

Ինը տարուայ ընթացքում 659.354 մարդ Լքել է աղանդը: Ուշադրութեան արժանի է այն՝ որ անդամների դուրս գալը սաստկացել է 1975-1978 թուականներին, Նաթանի ՉախՉախիչ կերպով յստակ, բայց այնուամենայնիւ չիրականացած մարգարէութիւնների պատճառով:

Տեղի չունեցած վախճանի համար հարկաւոր էր գտնել աստուածաշնչեան մի արդարացում, որը Բրուքլինից հասաւ 15.03.1976 թուականի Դիտարանի էջերի վրայ: Ըստ Ղեկավար Մարմնի, սխալը կայանում էր նրանում, որ տարիները սկսել էին հաշուել Ադամի արարումից, մինչդեռ պէտք է որ հաշուէին Եւայի արարումից սկսած: (Ծիծաղելի

խեղկատակութիւն): Միմիայն երբ Ադամը վերջացրեց բոլոր կենդանիներին անուններ դնել, Եհովան ստեղծեց Եւային: Բայց որքա՞ն ժամանակ ծախսեց Ադամը բոլոր կենդանիներին անուններ դնելու համար: Ղեկավար Մարմինը գրում է.

«Զգիտենք՝ թէ կարճ մի ժամանակամիջոց եղաւ, ինչպէս մէկ ամիս, կամ մի քանի ամիս, մէկ տարի, կամ դեռ աւելի: Բայց որքան էլ որ լինի այդ ժամանակաշրջանը, այդ քանակութիւնը պէտք է աւելացնել Ադամի արարումից անցած ժամանակին, հասցնելու համար մեզ 6.000 տարիներին, մինչեւ Աստուծոյ եօթներորդ օրը»
(Եհովա՛յ մի հրատարակութիւնից. *Siate svegli finché riusciate a scampare*):

Այս «խցանումը» թողատրոււմ էր շահել բաւական ընդարձակ ժամանակ, բայց տակաւին որքա՞ն կարող էին Եհովայի Վկաները միայնակ զբօսանքի պահել Ադամին եղեմական պարտէզում: Խուսափելու համար անդամների թուի տեսակէտով ուրիշ վտանգաւոր կորուստներից, 1976ի ամռանը ներկայացուեց նոր բանաձեւը. «Վախճանը կը գայ, երբ քարոզչութիւնը հասած կը լինի իր գազաթնակէտին»: Սա այն ամենաերկմիտ ու խարդախ բանաձեւն է, որ երբեւէ ծնուել է Ղեկավար Մարմնի մտքում: Այսպիսով շահագործման է ենթարկուում շարքային խեղճ Վկաների գերագոյն փափաքը, «աշխարհի վախճանը», այն կապելով նրանց քարոզչական ճիգերին, կամ ուրիշ խօսքերով՝ թէ որքան գրքեր ու ամսաթերթեր կը բաժանեն նրանք օրեկան, հարստացնելով Դիտարանի Ընկերութիւնը, առանց վիճելու, առանց պատճառաբանելու, առանց հարցումներ ուղղելու: (Ոմանք ընդգրկմանում են՝ թէ Եհովա՛յի հրատարակութիւնները շատ աւելի նուազ արժեն՝ քան եկեղեցական հրատարակութիւնները, կամ նոյնիսկ՝ որ Եհովա՛յի սկզբի ամիսներում ուղղակի նուիրում են իրենց «գովազդային» գրքոյկները: Պատճառը, եւս մէկ անգամ, շարքային Վկաների աշխատանքի շահագործումն է, որովհետեւ իրենց տպարաններում աշխատում են առանց վարձատրուելու, կամ չնչին վճարումով, զոհելով երեկոյեան հանգստի ժամերը, որ պարտաւոր էին իրենց ընտանեկան օջախում անցկացնել, իրենց զաւակների կողքին, որոնք կարիքն ունեն իրենց ծնողների գորովին: Մինչդեռ բոլոր եկեղեցական աշխատատեղերում աշխատողները վարձատրոււմ են, որովհետեւ որեւէ մէկին աշխատեցնելը պարզապէս երկնքի արքայութիւնը խոստանալով, նշանակում է ստրկացնել եւ շահագործել այդ բարի հոգիներին):

1977 թուականի Յունիսի 8ին մեռաւ Նաթան Քնորը (սա նոյնպէս չտեսնելով «աշխարհի վախճանը»), իր տեղը թողնելով Ֆրեդերիկ Ֆրանցին, որն իր պաշտօնին անցաւ 1977ի Յունիսի 22ին: Նախագահութեան առաջին ամիսներին, Ֆրանցը իր բոլոր ուժերը կենտրոնացրեց՝ մեղմացնելու համար այն խոր ճգնաժամը, որ ծանրացել էր աղանդի վրայ: Բացի անդամների քանակի նուազումը, 1975ի յուսախաբուցութիւնը բանավէճեր էր առաջացրել նաեւ Ղեկավար Մարմնի ներսում: Հարկաւոր էր ճշտել՝ թէ որն էր այն «սերունդը», որի մասին խօսուում է Մատթէոս 24, 34 հատուածում. «Այս սերունդը չի անցնելու, մինչեւ այս բոլորը չիրականանայ»:

Եհովա՛յի մեկնաբանողները գրում էին՝ թէ խօսքը վերաբերւում էր 1914ի սերունդին: Այսինքն, «աշխարհի վախճանը» տեսնելու էին բոլոր նրանք՝ ովքեր 1914ին ի վիճակի էին հասկանալու այդ տարուայ իրադարձութիւնները: 1975ից յետոյ երկարաձգուեցին սպասման ժամանակները. «այդ սերունդի» անդամները միայն նրանք չէին՝ ովքեր կարող էին հասկանալ 1914ի իրադարձութիւնները, այլ բոլոր նրանք՝ ովքեր կարող էին «տեսնել» այդ իրադարձութիւնները (Դիտարան, 01.04.1979):

15.04.1981 թուականի Դիտարանը աւելի ընդարձակեց հորիզոնները, ճշտելով՝ որ տասը տարեկան հասակում արդէն որոշ դէպքեր մնայուն հետքեր են թողնում յիշողութեան մէջ: Ուստի, մինչեւ որ 1914 թուականին ծնուածները բոլորը չմահանան, տրամաբանական է տակաւին սպասելը:

1914 թուականի խնդրի լուծմանը Ղեկավար Մարմինը յատկացրեց 1980 թուականի Մարտի 5ի նիստը: Ղեկավար Մարմնի անդամներից ոմանք (Ռոբերտ Շրոյդերը, Քարլ Քլայն եւ Գրենտ Սուրիթրը) առաջարկեցին Մատթէոս 24, 34 հատուածի «սերունդը» նկատել այլեւս ոչ թէ նրանց՝ ովքեր ծնուել էին 1914ին, այլ նրանց՝ ովքեր ծնուել էին 1957ին: Աստուածաշնչեան հիմքը «կարող էր» լինել Մատթէոս 24, 29 հատուածը. «Արեւը խաւարելու է, լուսինն այլեւս չի տալու իր լոյսը, աստղերն ընկնելու են երկնքից եւ երկնային գորութիւնները վրդովուելու են»: Շրոյդերն ու միւսները առաջարկում էին կապել այս հատուածը 1957ին «Սպուտնիկ» տիեզերանաւի արձակմամբ սկսուած տիեզերական դարին: Այսպիսով, կը շահէին աւելի քան 43 տարի, 1914ի համեմատ: Առաջարկը մերժուեց: Այնժամ Քլայնը առաջարկեց հետեւել արդէն մի քանի անգամ կիրառուած գործելակերպին, այսինքն՝ մի որոշ ժամանակի համար պարզապէս լուել որոշակի ուսուցումների շուրջ, այնպէս՝ որ եթէ կարիքը զգացուէր փոխելու ինչ որ մի բան, չէր առաջանայ ոչ մէկ հակազդեցութիւն: Բայց այս առաջարկը նոյնպէս մերժուեց: Մեծամասնութիւնը կողմ էր շեշտելու եւ դուրս ցայտեցնելու, ինչպէս որ սովոր էին, 1914 թուականը:

Յաղթական ելաւ Լլոիդ Բէրրիի՝ Ղեկավար Մարմնի ամենապահպանողական անդամներից մէկի առաջարկը, որի համաձայն «Ռուսաստանում կան անձինք, որ ապրում են մինչեւ հարիւր երեսուն տարեկան եւ դեռ աւելի», ինչը որ թոյլատրում է «աշխարհի վախճանը» տեղափոխել Երկուհազար թուականից այն կողմ:

Առայժմ այս գաղափարը տիրապետողն է եւ ով որ համարձակուում է կասկածել՝ թէ 1914ի սերունդը տեսնելու է աշխարհի վախճանը, արտաքսուում է կազմակերպութիւնից (երանի՛ իրեն): Սակայն անհնարին չէ, որ վաղ կամ ուշ այս ուսուցումը նոյնպէս ենթարկուի փոփոխութիւնների, ինչպիսին եղաւ պարագան եհովաջիական ուրիշ շատ (չասելու համար՝ բոլոր) ուսուցումների: Եհովաջիութեան գոյութեան հարիւր տարիների ընթացքում, իրենց ուսմունքի մէջ կատարուած այս բազում փոփոխութիւնները Ղեկավար Մարմինը բացատրում է «նաւավարական հնարքների» տեսութեամբ, որը ներկայացուած է 01.06.1982 թուականի Դիտարանի էջերում, ներշնչուած՝ տեսութիւն—ընդդիմութիւն—եզրակացութիւն հեգելեան սկզբունքից (թեզ—անտիթեզ—սինթեզ): Ինչը որ կատարուում է այսպէս.

ա) Սահմանուում է այսօրուայ «ճշմարտութիւնը» (տեսութիւն): Բայց յետոյ, ժամանակի ընթացքում, բացայայտուում է՝ որ այդ «ճշմարտութիւնը» ունի որոշ թերութիւններ կամ պակասութիւններ:

բ) Այնժամ որդեգրուում է ամբողջովին հակառակ, նոր «ճշմարտութիւնը» (ընդդիմութիւն): Հետագայում պարզուում է, որ սա նոյնպէս չի ներկայացնում ամբողջ «ճշմարտութիւնը»:

գ) Վերջաւորութեան, վերցնում են երկու տեսակէտներում ներկայ վաւերական գծերը (եզրակացութիւն):

Բնականաբար, Ղեկավար Մարմինը իր հետեւորդներին չի բացատրում թէ խօսքը վերաբերուում է Հեգելի իմաստասիրութիւնից (փիլիսոփայութիւնից) ներշնչուած սկզբունքներից մէկին (որովհետեւ դատապարտում են բոլոր ուսումները, յատկապէս՝ իմաստասիրութիւնը, որպէս սատանայական: Նպատակը շատ հասկանալի է: Տգէտ ամբոխների վրայ իշխելը շատ հեշտ է: Այս պատճառով են եհովաջի ծնողներին համոզում դպրոց չուղարկել իրենց որդիներին), այլ ջանում է խօսել հասկանալի բառերով, գործածելով «նաւավարական հնարքներ» արտայայտութիւնը: Ահա այս հնարքներից մէկը որպէս օրինակ: Բարոյական նկարագրի մի «ճշմարտութիւն» մարմնի անդամների փոխպատուաստումը:

ա) 1963 թուական: Փոխպատուաստումն օրինաւոր է, որովհետեւ այս հարցի շուրջ աստուածաշնչեան ոչ մէկ սկզբունք չկայ (Դիտարան, 15.03.1963):

բ) 1968 թուական: Փոխպատուաստումն ապօրինի է, վայրագութեան արարքներից մէկն է: Կան աստուածաշնչեան հիմքեր՝ այն դատապարտելու համար (Դիտարան, 15.03.1968):

գ) 1980 թուական: Փոխպատուաստումն օրինաւոր է, պահպանելով որոշ

զգուշութիւններ (Դիտարան, 01.09.1980):

Բայց ի՞նչ պատճառներից մղուած՝ մի «ճշմարտութիւն» կարող է հնարքներ բանեցնել: Քանի՞ Վկայ է մահացել մինչեւ 1980 թուականը, մերժելով մարմնի անդամների (սրտի, երիկամների, լեարդի եւ այլն) փոխպատուաստումը, որն ապօրինի էր 1968ին եւ օրինաւոր դարձաւ 1980ին: Ո՞ւմ ուսերի վրայ է ծանրանում բարոյական ու մարդկային պատասխանատուութիւնը այնպիսի ընտրութիւնների, որոնք խաղի տակ են դնում մարդկային հազարաւոր կեանքեր:

«Նաւավարական հնարքներ» բանեցնելով՝ փոփոխութեան են ենթարկել նաեւ Ադամի արարման թուականը: Սկզբում Ք.ա. 4.126 թուականն էր, ապա եղաւ 4.026ը: Երբ անցաւ 1975 թուականը եւ եհովաջիների հարիւրերորդ յուսախաբուութիւնը, Ղեկավար Մարմինը սկսեց նորից «հնարքներ» բանեցնել եւ բացայայտեց՝ որ 6.000 տարիները անցել էին, բայց Ադամի եւ ո՛չ թէ Եւայի ստեղծումից: Որքա՞ն երկարատեւ էր այս միջոցը: Ամիսներ, աւետեց սկզբում: Իսկ յետոյ, «հնարքներ» բանեցնելով, տարիներ:

Բայց ուրեմն ի՞նչ է մնում եհովաջիութիւնից, եթէ ամէն բան կարող է փոփոխուել: Իրականում՝ ոչինչ: Ո՞րն է, ուրեմն, եհովայի Վկաների հիմնական, բացարձակ եւ անփոփոխելի ճշմարտութիւնը: Կարող է հակասութիւն թուալ, բայց հետեւեալն է. Ղեկավար Մարմինը եւ միայն Ղեկավար Մարմինն է միշտ իրաւացի:

Իսկ Աստուածաշո՞ւնչը:

Աստուածաշունչն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ միայն գործիք Ղեկավար Մարմնի ձեռքերում: Միայն Աստուածաշունչը ոչինչ չարժէ եհովաջիների համար: Ավելին, Աստուածաշունչը վնասակար է, որովհետեւ այն առանց Ղեկավար Մարմնի առաջնորդութեան ընթերցելով՝ վտանգն է ստեղծում «վերստին ընկնելու աւանդական Քրիստոնէութեան ուսմունքի մէջ» եւ թաւալուելու «խաւարի» մէջ. «Երբեմն երբեմն, եհովայի ժողովրդի շարքերում երեւան են գալիս ոմանք, որոնք ինչպէս սկզբնական Սատանան, որդեգրում են մտածելու քննողական եւ անկախ մի կերպ ... ասելով՝ թէ բաւական է միայն Աստուածաշունչի ընթերցումը միայնակ կամ փոքրիկ խմբակներով: Բայց զարմանալի բան. իրենց այս աստուածաշունչեան ընթերցման պատճառով վերադառնում են այն ուսմունքին՝ որից հեռացել էին եւ որը Քրիստոնէութեան եկեղեցականները ուսուցանում էին հարիւր տարի առաջ» (Դիտարան, 15.08.1982): Բայց եթէ ճիշտ է, որ աւանդական Քրիստոնէութեան ուսուցումները հաստատում են միայն Աստուածաշունչի ընթերցանութեամբ, մինչ եհովաջիներինը կարիքն ունեն այլեւայլ հրատարակութիւնների, սա կայծակնային ապացոյցն է՝ որ աւանդական Քրիստոնէութիւնը ներդաշնակ է Աստուածաշունչի հետ, մինչ «Դիտարանի Ընկերութեան» ուսուցումները պտուղն են մարդկային խեղկատակութիւնների ու ... խարդախութիւնների:

1979 թուականը եղաւ ծանր ճգնաժամի տարի: Ղեկավար Մարմնի անդամներից մէկը, Ռայմոնդ Ֆրանցը, նախագահ Ֆրեդերիկ Ֆրանցի զարմիկը, կասկածի տակ դրեց 1914ի իմաստը եւ Դիտարանի Ընկերութեան ուսուցումներից ուրիշ շատերը: Նախ հեռացուեց Ղեկավար Մարմնից, ապա ամբողջովին արտաքսուեց աղանդից: Ռայմոնդ Ֆրանցի գրած «Խղճի ճգնաժամ: Եհովայի մի Վկայ խոստովանում է» գիրքը, որից արդէն մէջբերեցինք, բաւական օգտակար եղաւ աղանդի դիմակազերծման համար:

1992 թուականից, աղանդի ղեկավարն է Միլթըն Հենչէլը: Կամաց կամաց իր առջեւ ճանապարհ է բացում Ալբերտ Շրոյդերի կողմից բանաձեւուած գաղափարը, ըստ որի՝ «սերունդը, որ չի անցնելու» Քրիստոսի վերադարձից առաջ, բաղկացած է բոլոր նրանցից՝ ովքեր զգում են իրենց «օծեալ»: Իրականում, այս նոր տեսութիւնը պահանջում է՝ որ Արմագեդոնի պատերազմի բռնկման օրը գէթ մէկ օծեալ լինի երկրի վրայ: Բայց քանի որ ամէն տարի նորանոր եհովաջիներ իրենց խախտուած մտքերում լսում են (սատանայի) ներքին ձայնը, որը վկայում է՝ թէ իրենք պատկանում են «օծեալների» խմբին, այս ուսմունքը թոյլատրում է «մարգարէութեան» կատարումը յետաձգել անսահմանափակ անգամներ, անսահմանափակ ժամանակով:



Կարծում եմ թէ այսքանը արդէն բաւական է այս աղանդի պատմութեանը ծանօթանալու համար, ինչպէս նաեւ հասկանալու համար՝ որ եհովաջիների մօտ չկայ ճշմարտութեան եւ ոչ իսկ մէկ ճառագայթ, եւ ոչ իսկ մէկ նշոյլ: Բայց հարցերն առաւել ըմբռնելի դարձնելու նպատակով, այժմ անցնում եմ քննելու նրանց ուսուցումները:

ԳԼՈՒԽ Ա.

ԵՆՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Աստուածաշունչը մի ժողովածոյ է, զանազան գրութիւնների մի հաւաքածոյ, որոնք միմեանցից տարբերուում են գործածուած գրական կերպերով, շարադրման կամ խմբագրման ժամանակաշրջանով, միջավայրով, ինչպէս նաեւ ուսուցումների տարողութեամբ: Մի ժողովածոյ է, որ ձեւացել է կամաց կամաց, մօտաւորապէս հազար տարուայ ընթացքում, եւ ունեցել է բազմաթիւ ներշնչուած հեղինակներ, որոնց անձնական ինքնութիւնն ու նկարագիրը միշտ չէ՝ որ ներդաշնակուում են միմեանց: Աստուածաշունչը բաժանուում է երկու մասի. Հին Կտակարան եւ Նոր Կտակարան: Հին Կտակարանն իրենում ներառուում է 48 գիրք, իսկ Նոր Կտակարանը՝ 27: Բոլոր այս գրքերը միասին բաղկացած են 1.300ից աւելի գլուխներից, որոնք էլ իրենց հերթին բաժանուում են տասնեակ հազարաւոր հատուածների:

Ներածական այս սակաւաքանակ տեղեկութիւնները չկարծածից աւելի կարեւոր են, որովհետեւ թոյլատրուում են իսկոյն հասկանալ, որ Աստուածաշունչին հարկաւոր է մօտենալ պատշաճ պատրաստուածութեամբ: Եթէ գործի չեն դրուում գիտականօրէն փորձուած միջոցներ, հնարաւոր է Աստուածաշունչում բացայայտել հիմքեր մարդկային ամենայուսահատ գաղափարախօսութիւնների եւ ուսմունքների համար: Կան աստուածաշունչեան մեկնողական գիտութեան կանոններ, որոնք համընդհանուր կերպով ընդունուած են գիտնականների կողմից, բացառութեամբ եհովաջիների (եւ բողոքական որոշ հոսանքների), որոնց մօտեցումը Աստուածաշունչին քիչ յետոյ կը բացայայտենք միասին:

ա) Նախեւառաջ ասենք, որ աստուածային յայտնութիւնը կատարուել է աստիճանաբար: Այս աստիճանական յառաջադիմութիւնը, որ արդէն ներկայ է Հին Կտակարանում, առաւել մեծ չափեր է ստանում՝ երբ Հին Կտակարանը համեմատուում ենք Նորի հետ: Կայ որակի մի ցատկ, ուստում: Լսենք Պօղոս Առաքեալին. «Աստուած բազում եղանակներով եւ զանազան օրինակներով անցեալում խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով. այս վերջին օրերին մեր հետ խօսեց Իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամէն ինչի, եւ որի միջոցով ստեղծեց տիեզերքը» (Եբր 1, 1-2): Ուշադրութիւն պէտք է դարձնել՝ թէ սրբազան հեղինակը ինչ տարբերութիւն է հաստատուում Հին եւ Նոր Կտակարանների միջեւ, վերաբերեալ յայտնութեան ձեւին («բազում եղանակներով եւ զանազան օրինակներով»), ժամանակին («անցեալում» - «այս վերջին օրերին»), հասցէատէրերին («հայրերի հետ» - «մեր հետ»), հաղորդակցութեան միջոցին («մարգարէներ» - «Որդին»): Նոր Յայտնութիւնը կապուած է Հինին, բայց միեւնոյն ժամանակ գերազանցում է նրան:

Հին Կտակարանի յայտնութիւնը իր նպատակակէտը գտնում է Յիսուս Քրիստոսի Անձում. «Բայց նրանց (տակաւին քրիստոնեայ չդարձած հրեաների) միտքը կուրացաւ, քանի որ մինչեւ այսօր նոյն քօղը ձգուած մնում է Հին Կտակարանի ընթերցուածների վրայ եւ չի վերանում, որովհետեւ Քրիստոսի միջոցով է այն վերանում» (2Կր 3, 14): Հին Կտակարանը լուսաւորուում է Քրիստոսի միջոցով: Նաեւ Առաքեալների ժամանակուայ Եկեղեցին, երբ կամենում էր աւետել Քրիստոսի կեանքի եւ գործի հիմնական երկու պահերը, այսինքն՝ Խաչելութիւնն ու Յարութիւնը, շարունակ հիմնուում էր Հին Կտակարանի վրայ (Հմմտ. Գրծ 2, 14-41; 3, 11-24; 13, 16-42; եւ այլն):

Եհովաջիները չեն զանազանում Հին եւ Նոր Կտակարանները, ինչպէս նաեւ հաշուի չեն առնում աստիճանական յայտնութիւնը, որով առաջինը նպատակաւորուած է երկրորդի ծառայութեանը: Յայտնութեան յառաջադիմեալ հանգրուանները փորձում են բացատրել

Հինկտակարանեան նուազ յառաջագրիմեալ հանգրուաններով: Իրականում, եհովաջիուլթիւնը հիմնականում մնում է Հինկտակարանեան (գրեթէ հրեական) ազանդ:

բ) Աստուածաշնչի արմատները խոր կերպով մխրճուած են մարդկութեան պատմութեան մէջ: Իւրաքանչիւր գրութիւն, հետեւաբար, գործածում է իր ժամանակուայ լեզուն, հասցէագրուած է նախեւառաջ ներշնչուած հեղինակին ժամանակակից մարդկանց, ներկայացնում է իրականութիւնը այդ ժամանակուայ գաղափարների համաձայն (օրինակի համար, տիեզերքի ըմբռնումը Ծննդոց գրքի առաջին գլխում): Մարգարէներն ուղղակի կարիքն էին զգում ճշտելու իրենց կոչման թուականը. Ամոսը կանչուած է Իսրայէլի թագաւոր Հերոբոամ Երկրորդի եւ Յուդայի թագաւոր Ոզիայի օրերին, երկրաշարժից երկու տարի առաջ (Ամս 1, 1). Եսային կանչուեց այն տարին, որում մահացաւ Ոզիա թագաւորը (Ես 6, 1): Երեմիան՝ Յոսիայի թագաւորութեան 13րդ տարին (Երմ 1, 2). եւ այլն:

Տանք աստուածաշնչեան մի քանի օրինակ: Թիւր Աստուածաշնչում կարող է ունենալ զանազան տեսակի գործածութիւններ: Թիւր միշտ է, որ ունի տեղեկութիւն տալու պաշտօն: Այսպէս, 7 թիւր եւ իր բազմապատիկները իմաստաւորում են առատութիւն, միասնութիւն եւ ամբողջականութիւն: Կայէնից վրէժ է առնում 7 անգամ, իսկ Ղամէքից՝ 70 անգամ 7 (Ծնդ 4, 15. 24): Ղամէքն ապրեց 777 տարի (Ծնդ 5, 31): Մարգն օրեկան ընկնում է 7 անգամ (Առկ 24, 16): Հարկ է ներել ոչ թէ 7 անգամ, այլ՝ 70 անգամ 7 (Մտթ 18, 21): Նմանապէս, 100 թիւր եւ իր բազմապատիկները, յատկապէս 1.000ը, ակնարկում են հէքեաթային վիթխարի թուերին (գրեթէ ինչպէս միլիարդը մեր համար): Աստուած ողորմում է մինչեւ հազարերորդ սերունդը (Ել 20, 6): Արդարների համար, տաճարում անցկացուած մէկ օրն աւելի արժէ՝ քան հազարն այլուր (Սղմ 83, 11): Աստծոյ համար հազար տարիները երէկուայ պէս են, որ անցած է (Սղմ 89, 4): Սրբերը Քրիստոսի հետ թագաւորելու եւ հազար տարի (Յյտ 20, 6; հմմտ. Դան 7, 10): Նոյն ձեւով է գործածուում նաեւ 40 թիւր, որը պարզապէս նկատուում է որպէս սովորական տեւողութիւնը մէկ սերունդի: Այս թուերը փակ աչքերով վերցնելը որպէս ճշգրիտ թուեր՝ առաջնորդում է խոշոր սխալների:

Վերոյիշեալ պայմանական իմաստից բացի, թիւր Աստուածաշնչում կարող է ունենալ նաեւ սրբազան նշանակութիւն: Այսպէս, օրինակի համար, 12 թիւր վերջիվերջոյ դառնում է Աստծոյ ժողովրդի սրբազան թիւր. Իսրայէլի 12 տոհմերը: Քրիստոս նոյնպէս յարգում է այս խորհրդաբանական թիւր եւ ընտրում է 12 առաքեալներ (Մտթ 19, 28), իսկ Յովհաննէսի Յայտնութիւնը 12 թիւր գործածում է՝ նկարագրելու համար երկնքի Եկեղեցին (Յյտ 7, 5-8) եւ նոր Երուսաղէմը (Յյտ 21, 12):

Գրական կերպերին է պատկանում նաեւ վախճանաբանութիւնը (apocalittica): Գրական այս կերպը տարածուում է Ք.ա. 2րդ դարից մինչեւ Ք.յ. 2րդ դարը: Իր նախապատրաստական հողը գտնում է Հինկտակարանեան մի շարք հատուածներում. Եզեկիէլ 38-39; 40-48; Եսայի 24-27; Զաքարիա 9-14; յատկապէս՝ Դանիէլ 7-12: Նոր Կտակարանում, գրական այս կերպը հանդիպում է հետեւեալ հատուածներում. Մարկոս 13 եւ միւս Աւետարանների զուգահեռ հատուածներում; 2 Թեսաղոնիկեցիս 2, 1-12; եւ յատկապէս՝ Յովհաննէսի Յայտնութիւնում: Ներկայ տխրութիւնը մղում է խորհրդածելու բարիների ապագայ փառքի շուրջ: Նկարագրելու համար սեփական դարաշրջանը, ինչպէս նաեւ Աստծոյ եւ բարիների վերջնական յաղթանակի ճանապարհը, գործածուում է մի իւրայատուկ ոճ, որը եւ կոչուում է վախճանաբանական. ահաւոր աղէտներ, թուային քննարկումներ, գազանների ու հրեշտակների պատմութիւններ, վախճանին նախորդող նշաններ, վերջին փորձութիւններ, աշխարհի դատաստանը, երանութիւն եւ դատապարտութիւն: Հասկանալու համար վախճանաբանական այս տեքստերի պատգամը, հարկաւոր է՝ որ դրանք ընթերցուեն եւ ուսումնասիրուեն հիմնուելով գրական այդ կերպի իւրայատուկութիւնների վրայ:

ԵհովաՉիները, սակայն, անգիտանում ու մերժում են գրական կերպերի գոյութիւնը Աստուածաշնչում, հակառակուելով գիտական համընդհանուր հասկացողութեանը: Ճիշտ այս պատճառով է, որ տառացի կերպով են հասկանում 144.000 ընտրեալների թիւը, ինչպէս նաեւ – ծիծաղելի բան – երկնային Երուսաղէմը երեւակայում են որպէս կատարեալ խորանարդ, 12.000 ասպարէզ երկարութեամբ, լայնութեամբ ու բարձրութեամբ: 144.000 թուի խնդրին դեռ կ'անդրադառնանք, միայն խորանարդի վերաբերեալ կարճառօտ ասենք, որ աստուածաշնչեան պատկերի իմաստն այն է, որ նոր Երուսաղէմը լինելու է կատարեալ քաղաք, բաղկացած 12 թուից (որը թիւն է նոր Իսրայէլի՝ Եկեղեցու), բազմապատկուած հազար անգամ (որն արտայայտում է մեծ բազմութեան իմաստը):

դ) Սակաւաթիւ չեն դէպքերը, որոնցում եհովաՉիները աստուածաշնչեան նախադասութիւններից մէկը կղզիացնում են այն պարբերութիւնից կամ գլխից, որին պատկանում է, տալով նրան ամբողջովին տարբեր իմաստ, քան ունէր իր հարազատ հատուածում: Այս առումով, օրինակներն առատազեղ են: Տակաւին առիթը կ'ունենանք նրանց հանդիպելու: Առայժմ թող բաւական լինի միայն այս օրինակը. «Այս սերունդը չի անցնելու՝ նախքան այս ամէնի կատարումը» (Մտթ 24, 34). նախադասութեան «այս սերունդը» արտայայտութիւնը վերաբերում է Յիսուսի ժամանակակիցներին, ո՛չ թէ Ք.յ. 1914 թուականին ծնուածներին: Բայց այս օրինակին նոյնպէս կ'անդրադառնանք յետոյ:

Միայն ասենք, որ Աստուածաշնչի առանձին նախադասութիւններին կարելի է տալ ամէն տեսակ եւ ամէն ինչին հակառակ իմաստ: Օրինակի համար ներկայացնում ենք աստուածաշնչեան մի քանի տողեր, որոնք իրենց պարբերութիւններից կամ զուգահեռ հատուածներից կղզիացնելով, կարող են առաջնորդել հակասական, անբարոյական, ծիծաղելի եզրակացութիւնների:

1) Հակասական եզրակացութիւններ,

- Աստուած զղջում է (Ծնդ 6, 6), չի զղջում (Թվ 23, 19):

- Կարելի է երգուել (Սղմ 94, 11; Գրծ 2, 30; Եբբ 6, 17; Յյտ 10, 6), չի կարելի երգուել (Մտթ 5, 34):

- Մեղաւորը ներում է (Եզկ 33, 11) եւ չի ներում (Սղմ 3, 8; 103, 35):

- Մարդու գործերը նրան հաճոյ են դարձնում Աստծուն (Յկբ 2, 17) եւ ոչնչի էլ չեն ծառայում (Հում 1, 20):

- Մարդը բաղկացած է երկու տարրերից (միտք եւ մարմին. Հում 7, 25) կամ էլ երեք (հոգի, շունչ եւ մարմին. 1Թղ 5, 23):

2) Անբարոյական եզրակացութիւններ.

- Երանի՛ նրան՝ ով կը բռնի քո մանուկներին ու կը խփի քարին (Սղմ 136, 9). Աստուած պատուիրո՞ւմ է մանկասպանութիւնը:

- Ով չի ատում իր հօրն ու մօրը (Ղկս 14, 26). Յիսուս հրամայո՞ւմ է չյարգել չորրորդ պատուիրանը:

- Ինչ անելու ես՝ արա՛ (Յվհ 13, 27). Յիսուս հրամայո՞ւմ է Յուդային դաւաճանել իրեն:

3) Ծիծաղելի եզրակացութիւններ.

- Իշխանութիւն չունես մագերիցդ մէկն անգամ սեւ կամ սպիտակ դարձնելու (Մտթ 5, 36). մօտ ապագայում եհովաՉիները թերեւս կը սկսեն դատապարտել նաեւ վարսավիրներին:

դ) Ահաւոր կերպով դժուար է եհովաՉիների հետ երկխօսելը: Նրանց մտքում երբեք չի առաջանում կասկածի մի փոքրիկ նշոյլ, որ Աստուածաշնչի իրենց մեկնաբանութիւնը կարող

է գիտականօրէն անհիմն լինել: Ամէն անգամ նրանց հետ հանդիպելիս, իւրաքանչիւր ոք համոզուեալ է, որ ինքնաբաւարարութեան համոզումը նրանց մօտ համաքայլ է իրենց անընդունակութեան հետ: Որքան աւելի տգէտ են՝ այնքան աւելի գոռոզ են:

Տակաւին քսանամեայ Ռասըլը համոզուած էր, մեծամիտ յաւակնոտութեամբ, թէ քրիստոնէութեան երկու հազար տարիների ընթացքում իրենից առաջ ոչ ոք ճշմարտութեամբ չէր հասկացել Աստուածաշունչը եւ շտապեց տալ իր բացատրութիւնները: Իր առաջին եզրակացութիւնները բովանդակեց «Մեր Տիրոջ վերադարձի նպատակն ու կերպը» հատորում, ուր աւետում էր Քրիստոսի անտեսանելի վերադարձը 1874 թուականին, նախապատրաստելու համար աշխարհի դատաստանը 1914ին եւ սկսելու համար իր հազարամեայ թագաւորութիւնը այս երկրի վրայ: 1877 թուականին գրեց «Երեք աշխարհները եւ փրկութեան ծրագիրը» գիրքը, որում զանազանում է երեք ժամանակաշրջաններ. առաջինը, արարչութիւնից մինչեւ նախածնողների անկումը, ղեկավարուած՝ հրեշտակների կողմից. երկրորդը, անկումից մինչեւ 1914 թուականը, սատանայի սահմանափակ իշխանութեան ներքոյ. երրորդը, 1914ից սկսած մինչեւ անսահմանափակ յաւիտենութիւնը, արժանաւորների յարութեամբ եւ երկրի վրայ դրախտային խաղաղութեամբ: Ուշադրութիւն դարձրէք այս երկու կէտերի վրայ. ըստ Ռասըլի, 1914ին պէտք է սկսուէր դրախտային յաւիտենութիւնը: Քանի որ 2000 թուականն արդէն անցանք եւ տակաւին ոչինչ չի պատահել, կարող ենք ամենայն յստակութեամբ տեսնել եհովալիների հիմնադրի լիակատար կեղծիքը: Երկրորդ. նախածնողների մեղքից մինչեւ 1914 թուականն ընկած ժամանակաշրջանը յայտարարում է սատանայի իշխանութեան ներքոյ, այսինքն՝ նաեւ Քրիստոսի կեանքի տարիները, Խաչելութիւնն ու Յարութիւնը: Ըստ Ռասըլի, ոչինչ էլ չի պատահել. Քրիստոսի կեանքը, ուսուցումներն ու բերած փրկագործութիւնը Ռասըլին չեն հետաքրքրում (կամ թերեւս ժամանակ չունէր Քրիստոսով հետաքրքրուելու, որովհետեւ զբաղուած էր կնոջ հետ ամուսնալուծուելու դատավարութիւններով, ունեցուածքի բաժանման հարցերով, իր աշխատակցուհիների հետ սիրաբանութեամբ, մեղուզայի նմանուելով):

Ռասըլը մեծագոյն կարեւորութիւն էր տալիս իր «Աստուածաշնչեան Ուսումնասիրութիւններ»ին, որոնք վեց հատորով լոյս տեսան 1886ից մինչեւ 1904 թուականը: Տեսնենք՝ թէ ինչպիսի համեմատութիւն է կատարում իր ուսումնասիրութիւնների եւ բուն Աստուածաշնչի միջեւ.

«Քանի որ Աստուածաշնչեան Ուսումնասիրութիւնների վեց հատորները իրականում նոյն ինքն Աստուածաշունչն են նիւթերի կարգով տեղաւորուած եւ իրենց հիմք հանդիսացող աստուածաշնչեան հատուածներով, կարելի է անուանել դրանք յարմարեցուած Աստուածաշունչ: Խօսքն ուրեմն չի վերաբերում աստուածաշնչեան պարզ մեկնաբանութիւններին. դրանք գործնականում Աստուածաշունչն են: Իրօք, ոչ միայն դիւրին է նկատել, որ անհնարին է աստուածային ծրագիրը տեսնել ուսումնասիրելով միայն Աստուածաշունչը, այլ նաեւ՝ որ երբ մի կողմ են թողնուած Աստուածաշնչեան Ուսումնասիրութիւնները, նոյնիսկ դրանք ընթերցելուց յետոյ, դրանց հետ ընտանութիւն ձեռքբերելուց յետոյ, նոյնիսկ դրանք տասը տարի կարդալուց յետոյ, եթէ դրանք մի կողմ են թողնուած, ասում էի, միմիայն Աստուածաշունչն ընթերցելու համար, թէեւ Աստուածաշունչն ըմբռնելու մակարդակին էին տասը տարիներից ի վեր, մեր փորձառութիւնը ցոյց է տալիս, որ այդ անձինք երկու տարուայ ընթացքում վերադառնում են խաւարի մէջ: Իսկ եթէ կարդում են միայն Աստուածաշնչեան Ուսումնասիրութիւնները մէջբերումներով, առանց կարդալու Աստուածաշնչի էջերից ոչ մէկը, երկու տարուայ ընթացքում յայտնուած են լոյսի մէջ, որովհետեւ ստանում են Աստուածաշնչի լոյսը» (Դիտարան, 15.09.1910):

Այս տողերում դժուարին չէ տեսնելը Ռասըլի լիրբ համարձակութիւնը, որով իր մեկնաբանութիւնները աւելի բարձր է դասում նոյն ինքն Աստուածաշնչից: Բայց ճիշտ այս տողերով, Ռասըլն ինքը խոստովանում է՝ որ Քրիստոսեայ Եկեղեցու հաւատքը հիմնուած է Աստուածաշնչի վրայ (ասում է՝ միայն Աստուածաշունչը կարդալով երկու տարուայ ընթացքում հեռանում են եհովալիութիւնից), մինչ իր ուսուցումները պարզապէս իր խելառ

մտքի ցնորքներն են ու յօրինուածքները:

ե) Այս յանդգնութիւնն ու յաւակնոտութիւնը, սակայն, միայն Ռասըլիներ չէին: ԵՏՈՎաՂիութեան հայրն իր ախտերը փոխանցել է իր ծնունդներին: Ահա թէ ինչ է գրում 01.08.1955 թուականի Դիտարանը. գոյութիւն ունեցող քրիստոնեայ 251 կրօններից 214ը հաւատում են Երրորդութեանը, ուրեմն՝ կեղծ են: Մնացած 37ից 18ը հաւատում են հոգու անմահութեանը, ուրեմն՝ կեղծ են: Մնացած 19ից 6ը հաւատում են Օրէնքին (Աստծոյ պատուիրաններին), ուրեմն՝ կեղծ են: Մնացած 13ից 3ը չեն հաւատում սատանայի գոյութեանը, ուրեմն՝ կեղծ են: Մնացած 10ից 4ը ընդունում են Աստուածաշնչին հաւասար կամ գերադաս հեղինակութիւններ, ուրեմն՝ կեղծ են: Մնացած 6ից 5ը միակերպ ուսուցումներ չունեն, ուրեմն՝ որպէս ճշմարիտ մնում է միմիայն ԵՏՈՎայի Վկաների կրօնը:

Դեռ մի կողմ թողնենք, որ նշուած թուերը չեն համապատասխանում իրականութեանը: Առայժմ քննենք էականը: Նախեւառաջ, ԵՏՈՎաՂիութիւնը քրիստոնեայ յարանուանութիւնների շարքում դասելը անհնարին է, որովհետեւ այն ամբողջովին դուրս է քրիստոնէութեան ծիրից, չնայած որ ինքն իրեն անուանում է քրիստոնեայ ընկերութիւն: ԵՏՈՎաՂիութիւնը աւելի հրեական աղանդ է: Բայց այս շարժումը սկսուել է միայն անցեալ դարի վերջաւորութեանը, իսկ այն դիմագծերով՝ որ ունի այսօր, գոյութիւն ունի միայն 1919 թուականից սկսած: Սա ըստ իրենց նշանակում է, որ մինչեւ այդ օրը մարդկութիւնը երբեք չի ունեցել ճշմարիտ կրօն: Ըստ իրենց, ճշմարիտ կրօնը յայտնուել է՝ երբ յայտնուել են ԵՏՈՎաՂիները: Հետեւաբար, Քրիստոսի գործը ամբողջական ճախողման է ենթարկուել այս երկու հազար տարիների ընթացքում: Բայց եթէ, գործածելով իրենց կողմից նշուած թուերը, 251 քրիստոնեայ կրօններից 214ը հաւատում է Երրորդութեանը, եւ այդ կրօնները հիմնուած են Աստուածաշնչի վրայ, արդեօք չե՞նք կարող համոզուել՝ որ այդ 214 քրիստոնեայ կրօններն Աստուածաշունչը հասկանում են ԵՏՈՎաՂիներից աւելի լաւ:

զ) Աստուածաշունչն ինքն ասում է՝ թէ իր էջերը լաւ հասկանալու համար հարկաւոր է ունենալ Հոգու առաջնորդութիւնը եւ Առաքեալների աւանդութիւնը. «Բայց նախ սա իմացէք. մարգարէական գրութիւններից ոչ մէկը ենթակայ չէ անձնական մեկնութիւնների, որովհետեւ մարգարէութիւններից ոչ մէկը մարդկային կամքի համաձայն չի տրուել, այլ Սուրբ Հոգուց մղուած խօսեցին մարդիկ Աստծոյ կողմից» (2Պտ 1, 20): Զգուշացնում է նաեւ՝ թէ կան դժուարիմաց բաներ. «Նրանցում (Պողոսի նամակներում) կան որոշ դժուար ըմբռնելի բաներ, որոնք տգէտներն ու տատամսողները ծուռ են մեկնաբանում, ինչպէս նաեւ միւս Գրութիւնները, իրենց անձերի կորուստի համար» (2Պտ 3, 16): Բացի սա, Պողոս Առաքեալը պահանջում է քրիստոնեաներից, որ յարգեն ինչպէս իր գրաւոր նամակները՝ այնպէս էլ բանաւոր աւանդածները. «Ուրեմն, եղբայրներ, հաստատուն մնացէք եւ պահպանեցէք աւանդութիւնները, որ ստացաք մեր խօսքից՝ ինչպէս եւ թղթից» (2Թղ 2, 14). «Պատուիրում եմ ձեզ, եղբայրներ, յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի, հեռու մնացէք այն բոլոր եղբայրներից, որոնք անկանոն կեանք են վարում, ինչը չի համապատասխանում այն աւանդութեանը, որ ստացաք մեզին» (2Թղ 3, 6):

է) Արդեօք ԵՏՈՎայի Վկաների Դիտարան Ընկերութիւնը մեկնաբանում է ամբողջ Աստուածաշունչը, թէ՞ նրա մի մասը: Հետաքրքիր է, շարքային ԵՏՈՎաՂիներից որեւէ մէկը երբեւէ իր առջեւ դրե՞լ է այս հարցը: Պատասխանն անմիջական է. իրենց տոննաներով սպազրուած հրատարակութիւններում, ԵՏՈՎաՂիութեան ղեկավարները մէջբերում են Աստուածաշնչի միայն այն տողերը - միշտ կղզիացած - որոնք թւում է՝ թէ ծառայում են իրենց ուսուցումներին: Բայց այդ մէջբերումները (ըստ Վիլիամ Շնէլլի, որը հեղինակն է «Երեսուն տարի Դիտարանի ստրուկն էի» գրքի) ամբողջ Աստուածաշնչի հազիւ 6,5 տոկոսն են կազմում: Մնացած 93,5 տոկոսը երբեք չի մէջբերում: Բայց սրա համար մեր խորին շնորհակալութիւններն ենք յայտնում ԵՏՈՎաՂիների Բրուքլինի Ղեկավար Մարմինն,

որովհետեւ մեզ է թողնում Աստծոյ պատգամի ճշող մեծամասնութիւնը, եւ ճիշտ այս մասն է՝ որ կասկածներ է առաջացնում այն խելացի Վկաների մտքում, որոնք փորձում են ինքնուրոյն ուսումնասիրել Աստուածաշունչը եւ վերջում վերադառնում են քրիստոնէական հարազատ հաւատքին:

Բայց էական հարցն այն է՝ թէ արդեօք եհովաջիները իրենց սխալների մէջ ընկնում են ակամա՞յ, առանց անդրադառնալո՞ւ, թէ՞ գիտակից են եւ այնուամենայնիւ ընտրում են մնալ սխալի մէջ, մղուած ինչ ինչ շահերից: Եթէ խօսքը այս երկու հնարաւորութիւններից առաջինին վերաբերուէր, եհովաջիները յանցաւոր չէին լինի ծանր կերպով, բայց ցաւալին այն է՝ որ այդ բոլոր սխալները կատարում են գիտակցաբար եւ դրամական շահից մղուած՝ համարձակուել են նոյնիսկ կեղծել Աստծոյ Խօսքը: Տեսնենք՝ թէ ինչպէս:

Մինչեւ 1950 թուականը եհովաջիները չունէին Աստուածաշնչի իրենց թարգմանութիւնը: 1950-1960 թուականներին Դիտարանի Ընկերութիւնը հրատարակեց, անգլերէնով, վեցհատորեայ մի «աստուածաշունչ», «Սուրբ Գրութիւնների Նոր Աշխարհ Թարգմանութիւն» (*New World Translation of the Holy Scriptures*) տիտղոսով եւ ծանօթագրութիւններով: Թարգմանիչները խնդրել էին մնալ անանուն, «համեստութեան» համար: Բայց իրականութիւնն այն է, որ եհովաջիները չէին կարողացել գտնել գէթ մէկ գիտնական լեզուաբան, որ յանձն առնէր ներկայացնել իրենց «թարգմանութիւնը»: Ահա մի քանի գիտնականների կարծիքը, որ հրատարակուել է աւստրալիական «*Australian Record*» պարբերականի 20.05.1974 համարի 6րդ էջում.

Anthony Hoekema. «Նոր Աշխարհ կոչուող նրանց թարգմանութիւնը Աստուածաշնչի առարկայական թարգմանութիւն չէ արդի անգլերէնով, այլ մասնակի թարգմանութիւն է, ուր մաքսանենգօրէն ներմուծուել են Դիտարանի Ընկերութեան ուսուցումները»:

Ray Stedman. «Մանրամասն քննութիւնը, որ հասնում է թարգմանիչների կրթութեան արտաքին երեւոյթներից այն կողմ, բացայայտում է իրական շողախում ֆանատիկութեան, տգիտութեան, նախապաշարումների ու մասնակիութեան, ինչը խախտում է աստուածաշնչեան քննական գիտութիւնների կանոնները»:

R. Mantey. «Նոր Կտակարանի բազում հատուածներում նրանց թարգմանութիւնը ուսումնասիրելուց յետոյ եկայ այն եզրակացութեան, որ երբ Աստուածաշունչը համաձայն չի գտնուել իրենց ուսուցումներից որեւէ մէկի հետ, նրանք կամովին թարգմանել են այն սխալ տեքստներով, կամ էլ այն աստիճան ազաւաղել են տեքստը, որ հնարաւորութիւն են ստեղծել կարծելու թէ որոշ հիմքեր ունեն իրենց ոչ-աստուածաշնչեան կարծիքները: ... Բայց այն՝ ինչ ամենավատթարն է, յանցաւոր են դարձել կամովին ստախօսելու մէջ: Սա՛ իրենց թարգմանութիւնը դարձնում է պախարակելի» (A. AVETA, *Analisi di una setta*, ed. Filadelfia, Altamura 1985, pp. 30-31):

Այս անուանի գիտնականներից յետոյ, իմ մեկնաբանութիւններն աւելորդ են: Բայց անցնենք առաջ եւ տանք մի քանի օրինակ:

Եհովաջի թարգմ.

Քրիստոնեայ թարգմ.

Յովհաննէս 14, 26

Բայց օգնականը, սուրբ Հոգին, որին Հայրը ուղարկելու է իմ անունով, ասի՝ կ'ուսուցանի ձեզ ամէն բան ու կը պատմի այն ամէնը՝ որ ձեզ ասել եմ:

Բայց Մխիթարիչը, Սուրբ Հոգին, որին Հայրը առաքելու է իմ անունով, նա կ'ուսուցանի ձեզ ամէն բան ու կը յիշեցնի այն ամէնը՝ որ ձեզ ասել եմ:

Եհովաջի թարգմանութեան մէջ, յունարէն «*ekeinos*» դերանունը թարգմանուել է «այն»:
Այսպիսով, տեքստում Սուրբ Հոգին չի ներկայանում որպէս Անձ, այլ առարկայ, որովհետեւ եհովաջիները չեն ընդունում Ամենասուրբ Երրորդութեան հաւատքը (նաեւ այս պատճառով

են Սուրբ Հոգին միշտ փոքրատառ գրում): Բոլոր գիտնականները թարգմանում են «նա», որովհետեւ «ekeinos»-ը արական է եւ վերաբերում է «Pneuma»-ին (Հոգի), որը չէզոք սեռի է: ԵհովաՅի թարգմանութիւնը ճիշտ կը լինէր, եթէ դերանունը նոյնպէս չէզոք լինէր («ekeino»):

ԵհովաՅի թարգմ.

Քրիստոնեայ թարգմ.

Կողոսացիս 1, 15-17

Նա պատկերն է անտեսանելի Աստծոյ, առաջնեկն ամբողջ արարչութեան, որովհետեւ նրա միջոցով (մի-ս) բոլոր բաները ստեղծուեցին երկնքում եւ երկրի վրայ, տեսանելիներն ու անտեսանելիները, լինեն դրանք գահեր թէ տէրութիւններ, կառավարութիւններ թէ հեղինակութիւններ: Բոլոր (մի-ս) բաները ստեղծուել են նրա միջոցով եւ նրա համար: Նա (մի-ս) բոլոր բաներից առաջ է եւ նրա միջոցով (մի-ս) բոլոր բաները «դէպք»-եցին:

Նա պատկերն է անտեսանելի Աստծոյ, առաջնեկն ամբողջ արարչութեան, որովհետեւ նրա միջոցով ԲՆՆԵՐ ԲՆՆԵՐՆ ստեղծուեցին երկնքում եւ երկրի վրայ, տեսանելիներն ու անտեսանելիները, գահերը, տէրութիւնները, իշխանութիւնները, հեղինակութիւնները: ԲՆՆԵՐ ԲՆՆԵՐՆ ստեղծուեցին նրա միջոցով եւ նրա համար: Նա ԲՆՆԵՐ ԲՆՆԵՐԻց առաջ է եւ նրա միջոցով ԲՆՆԵՐ ԲՆՆԵՐՆ ԳՆՆԵՐ-ԲԻՆՆՆՆԵՆ:

ԵհովաՅիները նպատակն ակնյայտ է. քանի որ չեն ընդունում Ամենասուրբ Երրորդութիւնը եւ Քրիստոսի աստուածութիւնը, իրենց «թարգմանութիւնում» դարձրել են Նրան միւս բոլոր արարածներից մէկը, մինչդեռ իրական Աստուածաշնչի համաձայն՝ Քրիստոս ոչ միայն բոլոր բաների Արարիչն ու Նպատակն է («ստեղծուեցին նրա միջոցով եւ նրա համար»), այլ նաեւ Քրիստոս Ինքն է կեանքի տեւական աղբիւրը («նրա միջոցով բոլոր բաները գոյութիւն ունեն»):

ԵհովաՅի թարգմ.

Քրիստոնեայ թարգմ.

Յովհաննէս 8, 58

Յիսուս նրանց ասաց. Ճշմարտագոյն կերպով եմ ձեզ ասում. Աբրահամի գոյութիւն ունենալուց առաջ ե՞մ էի:

Ասաց նրանց Յիսուս. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ձեզ ասում. Աբրահամի լինելուց առաջ ե՞մ էմ:

Երբ եհովաՅիները սկսում են քարոզել, առաջին խօսքերից մէկը լինում է. «Չպէտք է աղօթել Յիսուսին, իսկ Աստծուն աղօթելիս պէտք է ասել Եհովա»: Բայց Աստուածաշունչը ցոյց է տալիս, որ Յիսուս նոյնպէս կրում է աստուածային YHWH անունը: Այս հարցին տակաւին կանգառառնանք աւելի մանրամասն կերպով, այստեղ բաւարարուենք մի քանի խօսքով: ԵհովաՅի անունը, որը եհովաՅիները սխալ կերպով կարգում են Եհովա, Աստուած յայտնեց Մովսէսին. «Աստուած ասաց Մովսէսին. Ես Նա եմ՝ Որ եմ: Ապա ասաց. Կասես իսրայէլացիներին՝ ԵՍ ԵՄՆ ուղարկեց ինձ ձեր մօտ» (Ել 3, 13-14): «ԵՍ ԵՄ» անունը (ԵհովաՅի) ցոյց է տալիս Աստծոյ էութիւնը որպէս յաւիտենական էակ («Ես եմ»-ը լինել բայի ներկայ ժամանակի եզակի առաջին դէմքն է): Եթէ բոլոր արարածները ենթակայ են անցեալի, ներկայի ու ապագայի փոփոխութիւններին, Աստուած միշտ ներկայի մէջ է, որովհետեւ դուրս է ժամանակի սահմաններից: Միմիայն Աստուած կարող է ասել «ԵՍ ԵՄ» բառի բացարձակ իմաստով: Եւ ահա, Աստուածաշունչը ցոյց է տալիս, որ Յիսուս նոյնպէս կրում է աստուածային ԵհովաՅի անունը, ամբողջովին հաւասար է Հօրը եւ կարողանում է ասել «ԵՍ ԵՄ»: ԵհովաՅիների նման կոյր պէտք է լինել, կամ՝ կամենալ լինել, չտեսնելու համար: Ահա նախադասութեան յունարէնը տառադարձութեամբ.

Prin Abraam genesthai ego eimi
Նախքան Աբրահամ լինեք ես եմ:

ԵհովաՅի թարգմ.

Քրիստոնեայ թարգմ.

Եբրայեցիս 1, 8

Բայց Որդու վերաբերեալ. Աստուծոյ ինչն է ինչ Գաւը յաւիտեան:

Որդու մասին, մինչդեռ, հաստատում է. Քո Գաւը, ո՞վ Աստուծոյ, յաւիտեան է:

Կարծում եմ՝ թէ մեկնաբանութիւնների կարիք չկայ: Լիրբ խարդախութիւնը երեւում է ինքնըստինքեան:

ԵհովաՅի թարգմ.

Քրիստոնեայ թարգմ.

Ղուկաս 23, 43

Եւ Յիսուս ասաց նրան. ճշմարտապէս եմ չեղ ասում այսօր. Դու կը լինես ինձ հետ Դրախտում:

Եւ Յիսուս նրան պատասխանեց. ճշմարիտ եմ չեղ ասում. այսօր կը լինես ինձ հետ Դրախտում:

Թերեւս արդէն նկատեցիք, որ կէտը եհովաՅիների մօտ անցել է «այսօր» բառից յետոյ եւ աւելացել է «Դու» դերանունը: Փոքրիկ մի բան, բայց որ ամբողջովին փոխում է նախադասութեան իմաստը: Ինչպէ՞ս: ԵհովաՅիները չեն հաւատում կեանքին մահից յետոյ: Մահն իրենց համար անձի ամբողջական ոչնչացումն է: Այս հարցին նոյնպէս տակաւին կ'անդրադառնանք, բայց արդէն այստեղ իսկ կարող ենք նկատել, որ Յիսուսի խօսքերը համաձայն չեն եհովաՅիների ուսուցումների հետ, որովհետեւ Յիսուս զղջացած աւազակին շատ պարզ բառերով ասում է, որ մահից անմիջապէս յետոյ («այսօր») միասին լինելու են Դրախտում:

ԵհովաՅի թարգմ.

Քրիստոնեայ թարգմ.

Առակայ 11, 9

Իր բերանով՝ ուրախողը իր մերձաւորին տանում է դէպի կործանում, բայց ճանաչողութեան միջոցով՝ արդարներն ազատուած են:

Իր բերանով՝ կեղծաւորը կործանում է իր մերձաւորին, մինչ արդարներն ազատուած են իրենց կորովամտութեամբ:

Եբրայերէն «khanef» բառը նշանակում է «խաբեբայ, կեղծաւոր, չարախօս, զրպարտող»: Այս խարդախութիւնը եհովաՅիներն անում են՝ Աստուածաշնչի «օգնութեամբ» վարկաբեկելու համար այն խելացի մարդկանց, որոնք եհովաՅի լինելու դժբախտութիւնն ունենալուց յետոյ՝ բացայայտել են ճշմարտութիւնը եւ վերադարձել են քրիստոնէութեանը (տարեկան հարիւր հազարաւոր մարդիկ): Բայց եթէ նոյնիսկ այստեղ խօսուէր ուրացութեան մասին, ինչպէս պատահում է այլ տեղեր Աստուածաշնչում, այդպիսի տողերը կարծեմ պէտք է վերագրուեն ո՛չ թէ եհովաՅիութիւնից հեռացածներին, այլ՝ եհովաՅիութեան մէջ մնացողներին:

ԵհովաՅի թարգմ.

Քրիստոնեայ թարգմ.

Մատթէոս 26, 26-28

Առէք, կերէք, սա նշանակում է իմ մարմինը:

Առէք, կերէք, սա իմ մարմինն է:

Յունարեն «estin»ը «einai» (լինել) բայի ներկայ ցուցականն է (է), որը եհովաՅիները փոխարինում են «նշանակում է»ով, մերժել կարողանալու համար Սուրբ Պատարագն ու Հաղորդութիւնը: Ինչ որ մի բան մերժելու այնքան էլ պատուաբեր միջոց չէ - կարծեմ - կեղծիքը:



Աստուածաշնչի սրբագան էջերում եհովաղիների կողմից կատարուած խարդախումների ցանկը կարող էի տակաւին շատ երկարել, բայց այսքանը արդէն բաւական եմ համարում իւրաքանչիւր խելացի մարդու համար:

Հաւատում եմք՝ թէ Աստուածաշունչը Աստծոյ Խօսքն է:

Երկրորդումն Օրինաց 4, 2 հատուածում կարգում եմք. «Ոչինչ չաւելացնէք այն ամէնի վրայ, որ պատուիրում եմ ձեզ, եւ ոչինչ չպակասեցնէք»:

Իսկ Յովհաննէսի Յայտնութեան գրքում (22, 19) գրուած է. «Եթէ մէկը այս մարգարէական գրքից պակասեցնի ինչ որ մի բան, Աստուած նրան կը զրկի կեանքի ծառից եւ սուրբ Քաղաքից»:

Կոչս է Եհովայի Վկաներին միամիտ անկեղծ հաւատքով յարած անձանց. ընթերցէք Աստուածաշունչը (իրականը) առանձին, առանց Դիտարանի հսկողութեան: Գործածեցէք ձեր բանականութիւնը, որ Աստծոյ մեծագոյն շնորհներից մէկն է ձեզ տրուած: Առանց խոր կերպով, կամ գէթ մակերեսային կերպով, ճանաչելու քրիստոնէութիւնը, ձեր հաւանութիւնը մի՛ տուէք Եհովաղիների աճպարար քարոզիչներին:

